Տ. ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ ԱՄԻՐՅԱՆ

ԿԱՐԻՆ ՔԱՂԱՔԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐԸ

Ա) ԿԱՐԻՆԻ ՄԻԱԲԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏԱՃԱՐԸ

Կարին քաղաքն ունեցել է մի հռչակավոր վանք՝ Միաբան սուրբ Աստվածածնի անունով: Հակոբ քահանա Կարնեցին գրում է, որ վանքը հիմնադրել է Մեսրոպ Մաշտոցը, եւ կառուցել ու շենացրել են Դավիթ Անհաղթն ու Մովսես Քերթողը. «եւ եղեւ սուգ մեծ ազգիս Հայոց, որ մնաց Ա(1) եկեղեցի պարսպէն ի դուրս, զոր հիմնարկեալ է Մեսրօպայ վարդապետէն եւ շինեալ է ձեռամբ Դաւթայ Անյաղթէն եւ Մովսէսէ Քերդողէն, անուն սրբոյհոյ Աստուածածնին»[1]: Այնուհետեւ Հակոբ Կարնեցին նկարագրում է, թե ինչպես իր օրերում տաճարը ենթարկվում է կողոպուտի, սակայն գողերը հետո բռնվում են ու չարաչար պատժվում: Այս նկարագրությունից հետո հեղինակը գրում է, որ այդ դեպքերը տեղի են ունեցել 1653թ., որից հետո տաճարը վերանորոգվել ու բարեզարդվել է Կարին քաղաքի առաջնորդ Սարգիս վարդապետի կողմից. «Այս եղեւ ի թուականութեանն Ս. Էջմիածնայ Տեառն Փիլիպպոսի երիցս երանեալ կաթողիկոսին եւ առաջնորդութեան Կարնոյ քաղաքիս Սարգիս վարդապետին, որ բազում շինուածով զարդարեաց զվանքս մեր. զարդարեսցէ Տէր Աստուած զհոգի նորա երկնային լուսովն, ամէն»[2]:

Իր չափերով փոքր, սակայն ամրակուռ այս եկեղեցին դասնյակ դարերի հոլովույթում գոյատեւելով, հասել է մինչեւ 1914-1915թթ.: Ամուր հիմքերով ու հասարաբեստ պատերով կառուցված եկեղեցին ունեցել է սրածայր ու անկյունավոր տանիք՝ ամրակուռ շինությամբ: Եկեղեցու վերաբերյալ վաղ շրջանից որեւէ արձանագրություն չի պահպանվել, սակայն իր հնադարյան տեսքն ու գործած խոր տպավորությունն ինքնին վկայում են, որ տաճարն ամենից հին ճարտարապետական կառույցն է պատմական Կարին քաղաքի՝ նրա զարդն ու հիասքանչ կոթողը թե՛ որպես պատմական հնություն եւ թե՛ որպես սրբավայր եւ ուխտատեղի, որի բարեխոսությանն ու օգնականությանն է մշտապես ապավինել Կարինի բնակչությունը. «Ո՛վ Միաբան Ս. Աստուածածին, պարծանք քրիստոնէից եւ վահան քահանայից, զի դու հիմնարկեալ ես եւ օծեալ ի սրբոց վարդապետացն մերոց Դաւթայ, որ Անյաղթն է կոչեցեալ եւ Մովսէսի Քերթողին, զի դու մօր գութ ունիս, որ միշտ բարեխօս եւս քրիստոնէից, լեր բարեխօս տառապեալ ազգիս Հայոց Արզրումայ քաղաքիս, ամէն»[3]:

Եկեղեցին կառուցված է եղել սրբատաշ մոխրագույն քարերով: Հիմնադրության իսկ օրից եկեղեցին եղել է սրբավայր եւ ծառայել է ինչպես եկեղեցական պաշտամունքների,

---

1 **Վ. Ա. Հակոբյան,** Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. Բ, Երեւան, 1956 (այսուհետ՝ **Վ. Ա. Հակոբյան,** հ. Բ), էջ 567:

2 **Յ. Կարնեցի,** Տեղագիր վերին Հայոց, հրատարակեց Կ. Կոստանեանց, Վաղարշապատ, 1903, էջ 60-61:

3 **Յ.Կարնեցի**, էջ 60:

այնպես էլ գիտական ու կրոնական ուսումնասիրությունների համար: Օրմանյան պատրիարքը նշում է, որ Եզր Ա Փառաժնակերտցի (630-641թթ.) Կաթողիկոսի օրոք Հայոց եւ Հունաց եկեղեցիների միության համար գումարված ժողովը տեղի է ունեցել այս տաճարում. «Հերակլ ուրախութեամբ լեցուն հրամայեց հանդիսաւոր եկեղեցական արարողութիւն կատարել Կարնոյ եկեղեցւոյն մէջ, եւ պատարագին մէջ Յոյներ եւ Հայեր, Հերակլ ու Եզր, միասին հաղորդուեցան, եւ այս կերպով գլուխ ելաւ Հերակլի խորհած եւ ճարտար միջոցներով յաջողցուած միաբանութիւնը»[4]: Տեղի ունեցած այս ժողովի համար էլ եկեղեցին ստացել է Միաբան Սուրբ Աստվածածին անունը:

Թեպետ Հակոբ Կարնեցին եկեղեցու հիմնադրումը վերագրում է Մովսես եւ Դավիթ վարդապետներին, այնուամենայնիվ տաճարի հիմնադրման իրական թվականի մասին հավաստի փաստեր կամ ավանդաբար մեզ հասած տեղեկություններ չեն պահպանվել: Տեղական ավանդությունների համաձայն տաճարի կառուցումը վերագրվում է VI-VII դդ., իսկ Ղազար Չարըգի կարծիքով այն կառուցվել է 600 թ. մոտ ընկած ժամանակաշրջանում[5]:

Կարնեցու վկայությամբ Միաբան Սուրբ Աստվածածնի տաճարը եղել է հռչակավոր վանք, որտեղ չեն լռել մշտապաշտոն կատարվող սաղմոսերգությունը, առ Աստված բարձրացող աղոթքները, աստվածահաճո պատարագներն ու ժամերգությունները: Իր ժամանակաշրջանի հոգեւոր ու մտավոր կյանքի նկարագրությունը խոսում է եկեղեցու իրապես հռչակավոր լինելու մասին. «... եւ եմք քահանայք Լ (30) կամ Խ (40), եղբայրք սիրով առ յիրարս եղեալ, ամենեքեան գրագիրք եւ ծաղկարարք, հմուտք ի ժամերգութեանն եւ ճարտասանք, տեղեակ Հին եւ Նոր Կտակարանաց, զի ամենայն օր ՃԾ (150) Սաղմոսացն վըճարի անխափան, ժամ եւ պաշտոն պատարագ մատչի, սարկաւագունք բազումք փափգաձայնք եւ երգողք գոյնզգոյն եղանակք երաժշտական երգոց եւ տումարական արհեստից տեղիակք, պարկեշտ գնացիւք եւ քաղաքավարութեամբ ի լի, զոր տէր Աստուած հաստատուն եւ անդրդվելի պահեսցէ անարատ սրբութեամբ. ամէն»[6]:

Ցավոք, այդ մարմնացած հայոց պատմությունն ու սրբությունը, որ դիմակայել է հազարավոր տարիների ավերին ու փորձությանը, կանգուն մնաց մինչեւ 1915թ.: Հայ ժողովրդի նկատմամբ գործած ցեղասպանության իր մոլուցքի մեջ թուրքը չխնայեց նրա նվիրականության եւ սրբության, ինչպես նաեւ հնագիտական ու պատմական արժեքները: Բացառություն չէր նաեւ Միաբան Սուրբ Աստվածածնի տաճարը:

Բ) ԽԱՉԿԱՎԱՆՔ

Կարին քաղաքից դեպի հյուսիս՝ Խաչկավանք գյուղի մեջ, վեր է խոյանում համանուն Խաչկա կամ Սուրբ Խաչի վանքը: Ուսումնասիրողների կարծիքով նախապես կառուցվել է Խաչկավանքը եւ հետո միայն նրա շրջակայքում ձեւավորվել համանուն գյուղը[7]:

---

4 **Մաղաքիա արք.Օրմանյան,** Ազգապատում, հ. Ա., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001:

5 **Անդ,** էջ 78:

6 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Բ., էջ 567-568:

7 **Մ. Միրախորեան,** Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, հ. Գ., Կ. Պոլիս, 1885, էջ 175-177, **Ն. Ս. Էփրիկեան,** Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., Վենետիկ, 1903-1905 (այսուհետ՝ **Ն. Ս. Էփրիկեան** հ. Ա.), էջ 148, **Յակոբ Ծ. վ. Քօսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, Վիեննա, 1926

Ինչպես Կարինի մյուս վանքերը, Խաչկավանքը եւս պարսպապատ էր: Պարսպի կամ գլխավոր մուտքի ճակատին արձանագրված է. «Ողորմութեամբն եւ օգնականութեամբ...աշխատութեամբ եւ ջանիւ Էրզրումցի Գալայչեան Ստեփան վարդապետին առաջնորդին սրբոյ Խաչկավանիցս շրջապատ պարիսպքն ի հիմանէ...շինեցաւ...ՌՄԼԷ (1788)»[8]: Վանքի պարիսպը հիմնովին վերակառուցվել է: Վանքում, բացի Խաչկավանքի փաճարից, որեւէ այլ հնություն չի պահպանվել:

Տաճարն ունի 8 մետր երկարություն եւ 5.30 մետր լայնություն: Կառուցված է հասպ եւ ամուր քարերով: Արեւելյան պատին կան մի քանի բարձրադիր պատուհաններ: Այն ունի բավականին բարձր բեմ (խորան), ինչպես նաեւ աջակողմյան եւ ձախակողմյան ավանդատներ: Այն ներքուստ բավականին պարզ է. որմերի վրա ուշադրության արժանի որեւէ քանդակ չկա եւ այս պարզությունն էլ խոսում է եկեղեցու հնության մասին[9]:

Խաչկավանքի քարերից մեկի վրա արձանագրված է. «Ի թուին ՈՀԸ(1239) կանգնեցաւ խաչս ի յիշատակ տէր Թորոսու Դերջանայ եպիսկոպոսի»[10], իսկ փաճարի հարավային կողմում գտնվում է Երուսաղեմի նվիրակ Մարտիրոս Ադրիանուպոլսեցի եպիսկոպոսի արձանագրությունն ունեցող դամբարանը: Նա 1762 թ. վախճանվել եւ թաղվել է Խաչկավանքում[11]:

Ավանդությունն այս վանքի անունը կապում է այնտեղ զետեղված Սուրբ Խաչի մասունքի հետ, սակայն Հ. Ոսկյանի կարծիքով վերոհիշյալ ավանդությունը չունի պատմական հիմք: Ըստ նրա այդ պարագային վանքը պիտի կոչվեր Սուրբ խաչ կամ Սուրբ Նշան անունով: Նա նաեւ ենթադրում է, որ վանքը «Խաչկավանք» անունն է ստացել սրբակյաց Խաչիկ ճգնավորի անունից, որի անունով մեկ այլ վանք կա Բարձ Հայքում[12]: Սակայն Կարինի առաջնորդարանի մեջ գտնված Խաչկավանքի պատմությունը եւ կոնդակը հաղորդում են, թե Հերակլ կայսրն իր զինվորներին կերակրող բարեպաշտ մի կնոջ սուրբ խաչի մասունք է նվիրում, վերջինս էլ մի վանք է կառուցում եւ այնտեղ ամփոփում սուրբ մասունքը[13]:

Խաչկավանքի հիմնադրման թվականի մասին չափազանց հետաքրքրական են Հ. Քոսյանի անձնական ուսումնասիրությունները: Վերջինս նշում է, թե մի քանի անգամ Խաչկավանք է այցելել եւ փորձել փաճարի հիմնարկության վերաբերյալ որեւէ արձանագրութ-

(այսուհետ՝ **Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը), էջ 40:

8 **Հ. Համազասպ Ոսկեան,** Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951 (այսուհետ՝ Բարձր Հայքի վանքերը), էջ 118:

9 **Հ. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 45:

10 **Անդ**, էջ 41:

11 **Հ. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 42-43:

12 Բարձր Հայքի վանքերը, էջ 120-121, նաեւ **Հ. Համազասպ Ոսկեան,** Կարին ու Կարնեցին Եւ Կարնոյ վանքերը, Վիեննա, 1950 (այսուհետ՝ Կարին ու Կարնեցին), էջ 46:

13 Խաչկավանքի պատմությունը եւ կոնդակը մինչեւ Տ.Ղեւոնդ քահանա Մարգարյանի վանահայրության ժամանակները պահվելիս են եղել քաղաքի առաջնորդարանում: Հ. Հակոբ ծ. վ. Քոսյանը գրում է, որ 1912թ. Սմբատ եպիսկոպոս Ասատրյանն առաջնորդարանի դիվանապետը իրեն ցույց է տվել Խաչկավանքի պատմության ձեռագիրը: Սակայն ձեռագիրը հետագայում անհայտանում է, եւ միայն որոշ ժամանակ անց Հ. Քոսյանը, բավական հետամուտ լինելով, գտնում է վանքի պատմության վերաբերյալ կոնդակը եւ ինչպես ինքն է գրում՝ «բառ առ բառ օրինակելով» հրատարակում, Տե՛ս **Հ. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 51-56: Խաչկավանքի հիմնադրության ավանդությունների մասին տե՛ս նաեւ **Հ. Ոսկյան**, Կարնո վանքերը, էջ 120-121, **նույնի** Կարինն ու կարնեցին, էջ 48-49 **Հ. Ներսէս Մարգիսեան,** Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 81, **Ինճիճեան Ղ.**, էջ 76:

յան գտնել, սակայն որոնումները որեւէ արդյունք չեն տվել: Շրջակա գյուղերի (Ղարարզ, Օձնի, Գեղախոռ եւ այլն) ծերերը պատմում են, թե իրենք ավանդաբար լսել են, որ փաճարի առաջ ուրիշ շինություն կառուցելու ժամանակ հողի փակից մի կոտրված քար է գտնվել՝ վրան թվակիր մի արձանագրություն: Այնուհետեւ տարեցներն ավելացնում են, թե գտնված քարի արձանագրությունը փորագրվել է եկեղեցուն կից կառուցված նոր շինության սյուներից մեկի վրա: 1912թ. օգոստոսի 21-ին հայր Հակոբ Քոսյանին հաջողվում է Խաչկավանքի աջակողմյան սյան վերեւի մասում ի թիվս այլ արձանագրությունների գտնել նաեւ այս մեկը. «Թուին հայոց ՁԸ(639) փաճարին է»[14]: Կարծում ենք, որ սույն արձանագրությունը լույս է սփռում փաճարի հիմնադրման թվականի վրա:

Խաչկավանքի ուխտի օրն է Խաչվերացի տոնը, որ կատարվում է սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը:

Գ) ՄՈՒՏՈՒՐԿՈՒ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԱՆՔԸ

Կարին քաղաքից հյուսիս-արեւելք՝ գեղադիր բլրակի վրա է կանգնած եղել Մուտուրկու Սուրբ Լուսավորիչ վանքը: Այն իր Մուտուրկու անունն ստացել էր արեւմտյան մասի մի հայաբնակ համանուն մեծ գյուղի անվանումից: Ինչպես նշեցինք, վանքը կառուցված էր բարձրադիր բլրակի վրա եւ հրաշալի ու տպավորիչ տեսք ուներ: Հայր Համազասպ Ոսկյանը վանական համալիրի դիրքի մասին գրում է. «Գեղեցիկ է վանքիս դիրքն ու հաճոյատեսիլ»[15]:

Վանքը բավական հին կառույց էր, սակայն դժբախտաբար, չեն հայտնաբերվել հիշատակություններ կամ արձանագրություններ, որպեսզի կարողանանք վանքի կառուցման թվականի եւ պատմության վերաբերյալ դատողություններ անել: Ելնելով այն փաստից, որ Սուրբ Լուսավորչի վանքը քաղաքին շատ մոտ էր կառուցված, Ղազար քահանա Չարըգն իր «Կարինապատում» մենագրության մեջ եզրակացնում է, թե «վանք չէ ունեցած գիտական ու գրական գործունէութեան ասպարէզ»[16]: Քաղաքի մոտ լինելով՝ վանքը բազմիցս աղետահար է եղել եւ վերանորոգվել: Այն աչքի էր ընկնում իր ընդարձակ շինություններով ու բակերով, որոնք անխոս վկաներն էին երբեմնի հարստության ու կարեւոր կենտրոնի: Վանքը բարձրապարիսպ էր եւ բարձրանիստ[17]: Աջակողմյան մասում, Քոսյանի բառերով՝ «քարընկէց մը հեռու», կանգուն մնացած մարդաչափ մեծությամբ մի հին խաչքար է եղել, որի շուրջ՝ տարբեր խաչքարերի պատվանդաններ ու քարեր: Ենթադրվում է, որ այդ տեղում անցյալում գերեզմանոց է եղել: 1861թ. վանքի վերաշինության ժամանակ օգտագործվել են դեռեւս պահպանված պատվանդանի խաչքարերը[18]:

Վանքն ընդարձակ բակում ունեցել է գեղեցիկ ավազան եւ աղբյուր: Վերջինիս մարմարյա սպիտակ քարի վրա արձանագրված է. «Յիշատակ է բարեհամ աղբիւրս այս Քղեցի Իսահակ վարդապետին եւ հոգեւոր ծնողին իւրոյ տեառն Յոհաննիսի, թվին ՌՃԳ (1654)»[19]:

---

14 **Քոսեան Հ.,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 44-45:
15 «Կարին ու Կարնեցին», էջ 142:
16 **Ղ. Չարըգ,** էջ 89:
17 **Հ. Ներսէս Մարգիսեան** , էջ 80:
18 **Հ. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 139:
19 Կարին ու Կարնեցին, էջ 139:

Վանքի արեւմտյան մասում մի ապառաժ քար կար, որի վրա կարծես թե ձիու ոտքի եւ պայտի նշաններ են դրոշմված եղել: Ավանդության համաձայն՝ դրանք Սուրբ Սարգիս զորավարի նժույգի հետքերն էին, որի պատճառով էլ քարը կոչվել է Սուրբ Սարգսի անունով[20]:

Վանքի գլխավոր դռան աջ եւ ձախ կողմերում կառուցված կային կրկնահարկ սենյակներ, որոնց թիվը հասնում էր շուրջ վաթսունի: Սենյակներն ավելի ուշ ժամանակներում կառուցված շինություններ էին եւ ծառայել են եկեղեցի այցելած ուխտավորների համար: Առաջին հարկի սենյակներից մեկի ճակատին փորագրված էր. «Արդեամբ գահվէճի արհեստաւորաց»[21]: Նշված սենյակներից քիչ թե շատ հետաքրքրականը հյուրընկալության կամ վանահորը հատկացված սենյակն էր: Հնության առումով արժեքավորը 1729-ից մնացած պղնձե սյունն է, որի շուրջբոլորը փորագրված են եղել նկարներ՝ հրեշտակ, ծաղիկ, թռչուն, առյուծ, խաչանման զարդեր, ձուկ եւ այլն: Սյան վրա փորագրված էր՝ «Թուին ՌՃՀԸ-ին (1729) առաջնորդության յԵրեմեայ վարդապետին եւ վայիլութեան Յովհաննես վարդապետին, ես անարժան տէր Մէլքոնի որդի տէր Պաղտասարս եկի սուրբ Լուսաւորչի վանքս օրհնուեցայ, զայս սեղանս նկարեցի ով ոք հանդիպիք, յիշեսցիք միով հայր մերաւ եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս ամէն: Ի վայելումն Ղազանճի պաշտոյին»[22]:

Մուտուրկու Սուրբ Լուսավորիչ վանական համալիրը բաղկացած էր երեք եկեղեցիներից՝ Սուրբ Լուսավորիչ, Սուրբ Խոր Վիրապ եւ Սուրբ Սարգիս:

Սուրբ Լուսավորիչը շինված էր սրբատաշ քարերով: Այն բավական մեծ էր եւ ուներ խաչաձեւ տեսք: Ներքուստ բավական պարզ էր, իսկ արտաքուստ դռան վերեւում քանդակված երեք խաչերից բացի ուրիշ հնության նշան չի ունեցել:

Եկեղեցու փայտաշեն երկաթապատ դռան վրա գամված էր պղնձե փոքրիկ պատկեր՝ Սուրբ Լուսավորիչը՝ երկու կողմերում հրեշտակներ: Հիշյալ պատկերի տակ արձանագրված էր. «1861. յիշատակ է դարբին մահտեսի Կարապետին մահտեսի Էրէմին»[23]: Եկեղեցում եղել է սուրբ Աստվածածնի եւ Լուսավորչի մեծադիր պատկերով խորան:

Տաճարի աջակողմյան մասում անթվական եւ առանց հիշատակագրության մի շիրիմ է երեւում: Առաջնորդարանի մեջ գտնված ձեռագիր տետրում նշվում է, որ եկեղեցու աջակողմում թաղված է Սահակ Ա կաթողիկոսը (387-439)[24]:

Սուրբ Լուսավորչի վանքը ծաղկում է ապրել հատկապես Սուրբ Էջմիածնի նվիրակ Սարգիս վարդապետի ժամանակ: Վերջինիս արդյունավոր գործունեության մասին մեզ տեղեկություններ է հաղորդում Հակոբ Կարնեցին. «Ի Թվականիս մերոյ ՌՂԵ (1646), որ եկն Ստանպօլցի Սարգիս վարդապետն սուրբ Էջմիածնայ նուիրակ, որ անդ էր վարժեալ եւ ունէր ձայն ահեղ եւ զարմանալի անուշ եւ համեղ, որ եւ հաւանեցոյց զքաղաքս եւ զերկիրս ճարտար քարոզութեամբն իւրով. եւ եպիսկոպոսն Ղազար իւրովի կամօվն հրաժարեցաւ եւ եւտ ի նայ զվանքն. եւ նա դարձաւ առ կաթողիկոսն Փիլիպպոս եւ էառ հրաման եւ կօնտակ նստիլ մեծագահ աթոռն Թէոդուպոլիս, եւ եկեալ արար բազում շէնք եւ շինուածք ձեռնա-

20 **Ն. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 138:
21 **Անդ**, էջ 139:
22 **Ն. Համազասպ Ոսկեան,** Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 145:
23 **Ն. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 141:
24 **Անդ,** էջ 141, տե՛ս նաեւ«Կարին ու Կարնեցին», էջ 145, **Մ. Միրախորեան,** էջ 173-177:

փուութեամբ քրիստոնէից եւ վաճառականաց քաղաքիս եւ յոյժ աշխատութեամբ եբեր ջուր եւ եհան ի դուռն վանացն աղբյուր...»[25]:

1859թ. տեղի ունեցած աղեստալի երկրաշարժի ժամանակ եկեղեցին խարխլվում է: Այնուհետեւ 1861թ. Հարություն արք. Վեհապետյանի (հետագայում Կ. Պոլսի պատրիարք) առաջնորդության ժամանակ ի հիմանց նորոգվում :

Դժբախտաբար 1913թ. Հոկտեմբերին եկեղեցին այրվում է: Հ. Քոսյանը նշում է, թե այն այրվել է վառած մոմի պատճառով, որը մոռացել էին մարել[26] :

Տաճարի ձախակողմում կար մի մատուռ, որի արեւելյան մասում՝ գրեթե մեկ մետր բարձրությամբ փայտակերտ շրջանակների մեջ առնված երկու պատկերներ են կախված եղել: Առաջին պատկերում է Սուրբ Տիրամորը, երկրորդը՝ Սուրբ Լուսավորիչին: Մատուռի ներքեւի մասում խոր գուբ կա, որը կրում է «Խոր Վիրապ» անունը: Այն ունեցել է գրեթե 3 մ. խորություն: Գուբը միաժամանակ տեղավորել է մոտ տաս հոգի: Խոր Վիրապի հարավային կողմում՝ պատի մեջ, ուր մի խորշ կար, տեղադրված էր մարմարե սպիտակ խաչքար, որի վրա գրված էր. «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, Սուրբ խաչերս բարեխօս առ Աստուած վասն մահտեսի Յուսէփին եւ իւր ծնողացն Պողոսին եւ մահտեսի Մարիամին թվին ՌՃՀԸ(1729)»[27]:

Խոր Վիրապի համար ավանդությունը պատմում է, թե Լուսավորչին Արտաշատ տանելիս մի քանի օր այստեղ են պահել[28]:

Վանքի հարավային մասում՝ գլխավոր տաճարից մի փոքր ցած, վայրում կառուցված էր մի փոքրիկ եկեղեցի՝ Սուրբ Սարգիս անունով: Եկեղեցին արտաքին տեսքից շատ հին էր երեւում եւ հավանաբար վանքի առաջին եկեղեցին է եղել: Այն նախապես ունեցել է սրբատաշ պատեր, որոնք, ցավոք, ժամանակի ընթացքում մաշվել են: Եկեղեցու արեւելյան պատին արտաքին կողմից քանդակված էին խաչքարեր իսկ ներքին կողմից այն շատ պարզ տեսք ուներ: Իրենց կառուցվածքով աչքի են ընկել միայն մի քանի հնագույն խաչքարեր, որոնցից հիշատակության արժանի էր հատկապես հարավային պատին հյուսված խաչքարը, որի վրա եկեղեցու վերանորոգության մասին թվագիր արձանագրություն է պահպանվել. «Նորոգեցաւ տաճարս վերստին սբ. Սարգսի Զօրավարի. ձեռամբ Խաչատուր վրդպտին Կոստնդնիպօլսցոյ եւ առաջնորդ այս սբ ուխտին որ եւ տրն ողորեսցի. թվին ՌՃԿԹ(1720) եւ նորին փոխանորդ Մակար վրդպտ.»[29]: Ավագ Խորանը Սուրբ Աստվածածնի պատկերով էր, որի շուրջը նկարված են եղել տասներկու առաքյալները եւ չորս ավետարանիչները՝ յուրաքանչյուր պատկերի տակ գրված համապատասխան անուններով:

Մուտուրկու Սուրբ Լուսավորչի այս հիասքանչ վանքն ունեցել է բազմաթիվ ծիսական գրքեր եւ սպասքներ, որոնց մեծ մասի հիշատակարաններն ու արձանագրությունները հրատարակել է Հ. Հակոբ Քոսյանը[30]:

Վանքի ուխտի օրը եղել է Լուսավորչի տոներին: Դժբախտաբար պիտի նշենք, որ վանքից այսօր մնացել է միայն իր երբեմնի փառավոր անունը:

---

25 **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, հ. Բ, Երեւան, 2002թ., էջ 572-573:
26 **Հ. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 141:
27 **Անդ,** էջ 145:
28 **Անդ,** էջ 146:
29 **Հ. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 147:
30 **Անդ,** էջ 138-150:

Դ) ՀԻՆՁՔԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

Կարին քաղաքից արեւելք Քառվոր եւ Խաչափայտ լեռնաշղթաների սփոռոփում գտնվող մի բլրակի հարթ մասում բարձրանում էր Կարմիր վանքը, որը հաճախ հիշատակվում է Հինձքի Կարմիր վանք անունով, որին Հ.Ղուկաս Ինճիճյանը հետեւյալ նկարագրությունն է տալիս. «Հնձուց վանք: Այսպես կոչի ի Հինձք կամ Հնձուք գեղջէն, որ է առընթեր նորա, կոչի եւ Կարմիր վանք, զի ի Կարմիր քարանց էր շինեալ գմբեթաւոր եկեղեցի նորա յանուն Աստուածածնի, որ ի վերջին երկրաշարժութեան անդ առհասարակ քայքայեցաւ. անկանի իբրեւ երեք ժամաւ հեռի յարեւելս Հիսիսոյ Էրզիռումայ, մեծին Ներսէսի շինեալ ասեն զայս եկեղեցի, քանզի ի դարձի իւրում ի Կեսարիոյ յետ ձեռնադրելոյն, յայսմ վայրի տեսեալ աւանդեն զՏիրամայրն ի հանդերձս կարմրափայլս. եւ ի յիշատակ այնր տեսլեան շինեալ եկեղեցի եւ մենաստան յանուն Աստուածածնի. իսկ զգմբէթն համակ ի կարմիր քարանց մերձակայ լերին ի խորհուրդ կարմրերանգ զգեստուցն»[31]:

Վանքի անվան ծագման եւ հիմնադրման վերաբերյալ գեղեցիկ ավանդություն է պահպանել նաեւ Հակոբ Կարնեցին. «Եւ ի միւս վանքն է Հնձուց Կարմիր վանքն,որոց եւ յիշատակէ Մօսէս Խորենացին. զոր եւ հիմնարկեալ է մեծին Ներսէսէ կաթողիկոսէ...: Եւ իջեալ անտի սուրբ հայրապետն հանդերձ իշխանօք եւ զօրօքն ամենայն գնացեալ հասին ի Քերսոն քաղաք անուանեալն եւ ի գիւղն Հինձք, դէպ յարեւելս կոյս ի բարձր տեղւոջ բնակեալ օթեցան...: Եւ ի գիշերին, յորում օթեալ էր, եւրես զարմանալի տեսիլ յայտնապէս, զի ամենամաքուր սուրբ Աստուածածինն ունելով ի գիրկս իւր զորդին միածին բազմութեամբ հրեշտակօք իջեալ եւ զգեցեալ էր ծիրանազգեստ կարմրափայլս...: Եւ ընդ լուսանալ առաւօտուն հրամայեաց զօրացն ամենից քարինս բերել եւ էարկ հիմն եկեղեցւոյ ի նոյն վիմին, յորում իջեալ էր ամենօրհնեալ սուրբ Աստուածածինն...եւ օծեաց զքարինս Դ (4) եւ կացեալ աւուրս ինչ ի շինումն սուրբ տաճարին, որ եւ հիմնարկեալ հասոյց աւարտ կամարակապ եւ գմբէթայարկ, կարմրափայլ քարամբք զԿաթողիկէն, զարդարեաց ի նմանութիւն հանդերձ ի սուրբ կուսին, որ ի հեռուստ իբրեւ զշափիւղայ փայլէ»[32]: Համազասպ Ոսկյանը վանքի «Կարմիր» անվան հետ կապված գրում է, թե իրականում այդ անունն էր կրում, որովհետեւ վանքի գմբեթը կարմիր քարերով էր շինված[33]:

Վանքը շրջապատված էր բավական բարձր պարիսպներով, որոնք երեք դուռ ունեին: Գլխավոր հարավային մուտքի ճակատին արձանագրված էր. «Այս պարիսպն Առաքել վարդապետին յիշատակն է»[34] :

Վանքն ուներ մեծ թվով սենյակներ՝ նախատեսված միաբանների եւ ուխտավորների համար, որոնք իրենց ճոխությամբ աչքի չեն ընկել: Ընդհանուր առմամբ այսպես է գնահատել Հ. Սարգիսյանը. «Բայց բացի յեկեղեցւոյդ այլ ամենայն շինուածքն անշուք են եւ ողորմելի»[35]:

---

31 **Ղ. Ինճիճեան,** էջ 75-76, տե՛ս նաեւ **Հ. Ս. Էփրիկեան,** հ. Բ., էջ 330:

32 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Բ., էջ 573-575, տե՛ս նաեւ **Մ. Միրախորյան**, էջ 174-175:

33 Կարին ու Կարնեցին, էջ 126:

34 **Անդ,** էջ126:

35 **Հ. Ներսէս Սարգիսեան,** էջ 80:

Եկեղեցին ամբողջապես կառուցված էր սրբատաշ քարերով: Տաճարի աջակողմյան եւ ձախակողմյան պատերի մեջ եղել են երկու մարմարե սպիտակ քարեր, որոնք ունեցել են երկու արձանագրություն: Աջակողմյան քարի վրա փորագրված՝

«Հազար երկերիւր ԺԹ(1770) Յիսուս թիւ լեալ
վասն մեղաց գեպինն շարժեալ
Սուրբ վանքս բոլորովիմբ փլեալ
Յակոբ արիին զպարիսպն շինեալ
ոմն Մօվպեպ ցասմամբ դուգանեալ
ոյր վասն դուռն ի վեր շարեալ
նորից շատ ժամանակ ամայեացեալ
Ղեւոնդ պեպն ի Պօլսոյ հրաման բերեալ
զդուռն բացեալ շինումն արկեալ
այլ եւ զինչ ինչ տեղիս շինեալ
բայց տաճարս այնպէս մնացեալ
շարժէն երեսուն ամ անցեալ»[36]:

Իսկ ձախակողմյան քարի վրա հետեւյալ արձանագրությունը՝
«ՌՄԽԹ(1800) Քրիստոս Հոկտ. ԻԷ(27)
մայրն Աստուծոյ արդ գթացեալ
հրաման շինման իսկ յաջաղեալ
տրօք ազգիս Հայոց օգնեալ
սուրբ տաճարս շքեղ շինեալ
գմբեթայարկ կարմրազարդեալ
աւուր օծմանն լուսափայլեալ
դեպն Մկրտիչ պեպն աշխատեալ
երկու բարեսերք թիկունս հասեալ
մոմճի Կարապետն արիացեալ
ղասապ Յակոբիւ ջանասիրեալ
այլ եւ զդուռն յիշատակ իւրեանց ստացեալ
բոլոր խարճիւքն որ պատշաճեալ»[37]:

Տաճարն ուներ բավական ամուր, երկաթապատ դուռ: Դռնից ներս մտնելով՝ անմիջապես աչքի էր զարնում քարաշեն բարձրադիր խորանը, որը վերեւ բարձրանալու համար երկու կողմերից աստիճաններ է ունեցել: Եկեղեցին նվիրված էր Սուրբ Աստվածածնին: Տաճարի ներսն աչքի էր ընկնում բազմաթիվ արձանագրություններով, որոնք դժբախտաբար զուրկ էին պատմական բովանդակություն պարունակող որեւէ փաստից[38]:

36 **Ն. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 108:
37 **Անդ,** էջ 108-109:
38 **Անդ,** էջ 110-113:

Վանքը բավական հին կառույց էր, որի մասին Հ. Էփրիկյանը գրում է. «Տաճարին հին ու բիւզանդական ոճով հաստահիմն ու ամրակուռ շէնքը ցոյց կու տայ, թե հազարաւոր տարիներ կրցած է դիմադրել հոսանուտ ժամանակի աւերմանց եւ անվնաս գալ հասնիլ մինչեւ մեր օրերն»[39]: Ավանդության համաձայն՝ վանքի հիմնադիրը Ներսես Մեծ հայրապետն է, իսկ առաջին վանահայրը՝ Խադ վարդապետը[40]: Մինչդեռ Հ. Համազասպ Ոսկյան կարծիքով վանքը հիմնադրվել է X դարում՝ Սարգիս վարդապետի ջանքերով[41]:

Էփրիկյանը գրում է, թե ըստ ավանդության՝ հայ գրականության Ոսկե դարում Մովսես Խորենացին եւ իր ընկերները՝ թարգմանիչ հայրերը, Աթենքից եւ Ալեքսանդրիայից վերադառնալիս նախ բավական երկար ժամանակ օթեւանել են այս վանքում եւ մի շարք իմաստասիրական ու աստվածաբանական ճառեր գրել: Հինձքի Կարմիր վանքում են ուսանել ու զարգացել մեկեղեցու ամենանշանավոր մատենագիրներից ու վարդապետներից Գրիգոր Վկայասերը, Գրիգոր Մագիստրոսը, Հովհան Օձնեցին (վերը նշված Օձնի գյուղից), Անանիա Շիրակացին, Խոսրով Անձեւացին, Գրիգոր Նարեկացին, Արիստակես Լաստիվերտցին եւ շատ ուրիշ նշանավոր վարդապետներ ու եպիսկոպոսներ: Այնուամենայնիվ Հ. Ոսկյանը նշում է, թե վերջիններիս վերաբերյալ «չունինք ամենեւին հաստատուն ապացոյց ընդունելու որ հոն զարգացած ըլլան»[42]: «Սակայն,- ավելացնում է Հ. Ոսկյանը,-այն իրողութիւն է, որ Կարմիր վանքը իր հիմնարկության առաջին շրջաններուն կունենայ ծաղկալից, ծաղկաւէտ կյանք մը եւ ապա քաղաքական աննպաստ, բայց ազդեցիկ պարագաներու տակ կանշքանայ, սակայն եպքէն նորէն կը վերակենդանանայ, բայց առաջին վիճակին երբեք չի բարձրանար»[43]: Հինձքի Կարմիր վանքը մարդաշատ էր լինում հատկապես սուրբ Աստվածածնի տոներին:

Հայ մատենագրության մեջ «Կարմիր վանք» անունով բազմաթիվ հիշատակարաններ են մեզ հասել, սակայն նրանցից շատերը պատկանում են համանուն ուրիշ վանքերի: Հինձքի Կարմիր վանքին ստուգապես վերաբերող հիշատակարաններ հրապարակել է Հ. Համազասպ Ոսկյանը[44]:

Հ.Քոսյանը կազմել է Հինձքի Կարմիր վանքի վերջին շրջանների վանահայրերի գավազանագիրքը՝ 930 -1899 թթ.[45]:

Ցավ ի սիրտ պետք է նշել՝ ինչքան որ փառահեղ է եղել Հինձքի Կարմիր վանքի անցյալը, նույնքան սրտակեղեք է ներկայիս վիճակը: Երբեմնի կանգուն այս վանքն իբրեւ այդպիսին այլեւս գոյություն չունի:

---

39 **Հ. Ս. Էփրիկեան,** Հ. Բ, էջ 330:
40 «Բազմավէպ», (1907), էջ 473-474:
41 «Կարին ու Կարնեցին», էջ 132:
42 **Անդ,** էջ 132:
43 **Անդ,** էջ 133:
44 **Անդ,** էջ 133:
45 **Հ. Քոսեան,** Բարձր Հայք, Կարնոյ Գիւղերը, էջ 117-118: